ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 27

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած ընդլայնված գործակարգավարական խորհրդակցության

15.12.2025թ. **ք.Վանաձոր**

Նիստը վարում էր մարզպետ Ա.Մկրտչյանը.
Մասնակցում էին
Ա.Ղարիբյանը -մարզպետի տեղակալ
Մ.Դալլաքյանը - գլխավոր քարտուղար
Լ.Աբրահամյանը - մարզպետի խորհրդական
Հ.Ադամյանը - մարզպետի խորհրդական
Կ.Ադամյանը, Ա.Շիրինյանը, Ռ.Պողոսյանը, Վ.Հովհաննիսյանը, Ռ.Մարգարյանը, Ա.Թումանյանը, Մ.Սարգսյանը, Գ.Մելիքսեթյանը, Ա.Մալոյանը, Լ.Մաթոսյանը, Ա.Բեջանյանը, Է.Հախվերդյանը - մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
Ա.Երիցյանը - մարզպետի աշխատակազմի պայմանագրային աշխատակից

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

1. **Նախորդ ժամանակաշրջանի ընթացքում կատարված աշխատանքների և տրված հանձնարարականների վերաբերյալ հաշվետվություն**

/զեկուցող Լոռու մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ/

2. **Այլ հարցեր**:

Ե լ ույ թ ու ն ե ց ա ն

ՀՀ Լոռու մարզպետ Ա.Մկրտչյանը ներկայացրեց մարզպետի աշխատակազմի պատասխանատուներին և ստորաբաժանումների ղեկավարներին տրված հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն:

ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Մ.Դալլաքյանը ներկայացրեց ՀՀ Կառավարության կողմից ներկայացված որոշման նախագծի վերաբերյալ տեղեկատվություն, որը վերաբերում է հանրային ծառայողներին տրամադրվող հավելավճարների և պարգևատրումների բաշխման նոր ընթացակարգին և առաջարկեց նաև ստորաբաժանումների ղեկավարներին՝ անհրաժեշտության դեպքում ներկայացնել առաջարկություններ:

Մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարները ներկայացրեցին նախորդ ժամանակահատվածի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն:

Լոռու մարզպետը հանձնարարեց.

1. **Մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝**

1.1 Ըստ համակարգման ոլորտների նախատեսված կամ պլանավորված մարզամշակութային և այլ կամ տարբեր բնագավառներում իրականացվող միջոցառումների անցկացման և ձևաչափի վերաբերյալ նախօրոք տեղեկացնել Լոռու մարզպետին:

1.2 Իրականացված շրջայցերի, հանդիպումների և տարբեր քննարկումների արդյունքների վերաբերյալ կատարված աշխատանքների համար կազմել արձանագրություններ և հաշվետվություններ:

2. Լոռու մարզպետի տեղակալ Ա.Ղարիբյանին՝

Մարզի համայնքների ղեկավարների հետ քննարկել և ներկայացնել տեղեկատվություն վերջին օրերի ընթացքում քամիներից կրած նյութական վնասների վերաբերյալ:

3. Մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Ա.Շիրինյանին՝

Յուրաքանչյուր երկուշաբթի և չորեքշաբթի օրերին ներկայացնել ամբողջական տեղեկատվություն մարզի համայնքների կողմից սեփական եկամուտների հավաքագրման վերաբերյալ:

4. Մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ռ.Մարգարյանին՝

Յուրաքանչյուր երկուշաբթի ներկայացնել նախորդ շաբաթվա ընթացքում իրականացված շրջայցերի և մշտադիտարկումների վերաբերյալ տեղեկատվություն:

Ստորագրող
ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
1204920311

2025-12-16 14:12:51 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա.ՄԿՐՏՉՅԱՆ**

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99